

Վերնագիր/Նիւթ: Պաշտպանել ԲՈԼՈՐ Քալիֆորնիացիներու հասանելիութիւնը
Ծառայութիւններու եւ Աջակցութիւններու

Մարմին:

Միլիթի Համայնք,

[Associated Press-ը հաղորդեց որ](#) Medicare եւ Medicaid Ծառայութիւններու դաշնակցային
Կեդրոնները, որոնք ծանօթ են իբրեւ CMS, այս շաբաթ, դաշնակցային Department of Homeland
Security-ին Medicaid տեղեկութիւններ տրամադրեցին մի քանի նահանգներու համար,
ներառեալ՝ Քալիֆորնիան: Իբրեւ պատասխան, Կառավարիչ Նիւսըմ ուժեղ յայտարարութիւն
մը հրապարակած է: Ներկայիս ծանօթ չէ թէ յստակ ի՞նչ տեղեկութիւն կ'իսուած է այս
դաշնակցային գործակալութիւններուն միջեւ:

Քալիֆորնիայի Health and Human Services գործակալութեան Քարտուղար Քիմ Ճոնսըն մեզմէ
խնդրած է որ հետեւեալ պատգամը կ'իսենք ամբողջ համայնքին հետ.

Քալիֆորնիայի Health and Human Services գործակալութեան միջոցաւ,
ամէն օր կ'աշխատինք իբրեւ գործընկերութիւն, կատարելու համար մեր
առաքելութիւնը, աջակցելու Քալիֆորնիացիներուն, որոնք մեզի
ամենաշատ պէտք ունին, եւ հասնելու ԲՈԼՈՐԻՆ համար առողջ
Քալիֆորնիայի մը: Մենք մարդիկ ենք որոնք մարդոց կը ծառայեն, որոնք
կը կեդրոնացնեն մեր համայնքներու արժանապատուութիւնն ու
առողջութիւնը:

Մինչ Քալիֆորնիայի տարածքին համայնքներու մէջ վախը իրական է, մենք
կը շարունակենք ծառայել, բացայայտել եւ դիմագրաւել չբաւարարուած
կարիքներ, եւ աշխատիլ իբրեւ գործընկեր, համայնքին հետ: Մեր
աշխատանքը ալ աւելի կենսական է մարտահրաւերներով լի եւ անորոշ
այս ժամանակներուն: Մինչ ժամանակները աննախընթաց են,
չգծագրուած չեն: Ծառայութիւններ ունինք որոնք ներդրուած են
համայնքէն ներս, որոնք ուժեղ կը կայնին եւ կը շարունակեն կայունութիւն
եւ կապուածութիւն մատուցել:

Կը քաջալերեմ ձեր իւրաքանչիւրը, որ իրար աջակցի, մինչ ամէն օր կը
նաւարկենք: Հաճեցէք նաեւ ձեր անձին հոգ տանիլ, ինչպէս ուրիշներու հոգ
կը տանիք եւ ճանչցէք որ մեր շատերուն համար, աշխատանքը խորապէս
անձնական է: Մինչ այս պահի փորձառութիւնը ճնշող կրնայ ըլլալ, վստահ
եմ որ նաեւ պիտի առաջնորդենք, եւ զգանք կարեկցանքի, փոխադարձ
օգնութեան, զօրակցութեան, ուժգնութեան եւ համագործակցութեան
օրինակներ: Մենք Քալիֆորնիան ենք:»

**Քալիֆորնիայի զարգացման հաշմանդամութեան ծառայութիւններու համակարգը իրաւունք
մըն է, իրաւաստ ԲՈԼՈՐ Քալիֆորնիացիներու համար, անկախ թէ ով ենք անոնք:** Մենք մեր
պարտաւորութիւնը շատ լուրջի կ'առնենք, հետեւելու պետական եւ դաշնակցային

օրէնքներու, որոնք կը պաշտպանեն ձեր տեղեկութիւնները եւ կը սահմանափակեն թէ երբ եւ ինչպէս կրնան անոնք կիսուիլ: Յունուարէն ի վեր, հետեւեալ տեղեկութիւնները թողարկած ենք, ուղղութիւնով, ելեկտրոնային նամակագրութեան եւ լրատու յօդուածներու միջոցաւ:

- [Միջոցներ Բոլոր Քալիֆորնիացիներու համար.](#) : Տեղեկութիւններ իրաւունքներու եւ իրաւաբանական ծառայութիւններու մասին
- [Ներգաղթային Իրաւաբանական Ծառայութիւններ:](#) Անվճար իրաւաբանական ծառայութիւններ եւ համայնքային կրթութիւն ընտանիքներու համար որոնք կը նաւարկեն ներգաղթային համակարգին մէջ
- [Կանուխ Սկիզբ եւ Lanterman Act-ի \(Լանթերման Հաշմանդամութեան Օրէնք\) փաթեթներ.](#) : Տեղեկութիւններ իրաւասութեան, ծառայութիւններու եւ ձեր իրաւունքներուն մասին, բազմաթիւ լեզուներով
- [Գաղտնիութեան Պաշտպանութեան Տեղեկատուական Թերթիկ.](#) : Կ'ամփոփէ թէ ինչպէս տեղեկութիւնները պաշտպանուած են բազմաթիւ լեզուներով
- [Աւելի Մօտէն Ակնարկ մը՝ Գաղտնիութեան Պաշտպանութեան .](#) : Մանրամասնութիւններ՝ թէ ինչպէս տեղեկութիւններ կը պաշտպանուին եւ կը գործածուին, յաւելեալ միջոցներով
- [Միջոցներ՝ Սորվելու Ձեր Գաղտնիութեան Իրաւունքներուն մասին.](#) : Ինչպէս աշխատիլ ձեր ծրագրային խումբին հետ, պաշտպանելու համար գաղտնիութիւնը տան մէջ եւ աւելին
- [Ուղղութիւն՝ Հաճախորդներու Տեղեկութիւններու Հասանելիութեան մասին.](#) : Ղրկուած՝ շրջանային կեդրոններու եւ ծառայութիւն մատուցողներու, թէ ինչպէս պէտք է վերահսկուի տեղեկութիւններու հասանելիութիւնը հանրային եւ սեփական վայրերու մէջ
 - [Acceso a la Información del Cliente \(Spanish\)](#)
 - [Պարզ լեզուի](#) Տարբերակ եւ [Սպաներէնով](#)

Գոհացնելու Քարտողար Ճոնսընի՝ փոխադարձ օգնութեան, զօրակցութեան, եւ համագործակցութեան պատգամը, կը տրամադրենք նաեւ հետեւեալ տեղեկութիւնները, օժանդակութեան համար: Պիտի շարունակենք բարելաւելու եւ թարմացնելու մեր միջոցները:

Օժանդակութիւն.

- [Սնունդի Պանք մը Գտէք.](#) : Տրամադրելի թարմ արտադրութիւններ եւ պահեստի հիմնական մթերքներ ձեր շրջանին մէջ
- [Քալիֆորնիայի Հոգեկան Առողջութիւնը Բոլորին Համար.](#) : Հոգեկան առողջութեան տագնապի միջոցներ, ինչպէս նաւարկել առողջապահական ապահովագրութեան համար, եւ միջոցներ՝ զգացական աջակցութեան համար
- [CalHOPE: 24/7,](#) հասակակիցներու կողմէ վարուող, տագնապի «տաք» գիծեր եւ թուային ծառայութիւններ, տրամադրելով խորհրդապահական, զգացական աջակցութիւն
- [Հոգեկան Առողջութեան Միջոցներ Երիտասարդներու համար:](#) Չանազան երիտասարդներու յատուկ հոգեկան առողջութեան միջոցներ եւ կազմակերպութիւններ

- [Օգնել երեխաներ՝ Յադթահարելու վաստածքային իրադարձություններ մը ետք \(Child Mind Institute\)](#). Բազմալեզու թեկադրանքներ՝ աջակցելու երեխաներու որոնք վաստածքներ կը զգան

Իրաւաբանական Փաստաթուղթեր

- [Խնամակալութեան Ինքնօգնութեան Ուղեցոյց](#). Ընտանիքներ կրնան պատրաստուիլ խնամակալութիւններ հաստատելու համար
 - [Անչափահասի մը Խնամակալի Նշանակման Խնդրագիր](#). : Խնամակալութիւն մը ստեղծեցէք՝ դիմում ներկայացնելով ձեր տեղական դատարանին մէջ
- [Քալիֆորնիայի Օրէնսդրական Լիազօրագիր](#): Իրաւական լիազօրութիւն տուէք այլ մարդոց որ գործեն ձեր հաշույն, ոչ-բժշկական որոշումներու համար
 - [Poder conforme a la ley uniforme sobre la elaboración de poderes del estado de California](#)
- [Բարձրագոյն Առողջական Խնամքի Ուղղութիւն](#). : Շտապ առողջապահութեան փափաքներ ձեր անձին եւ կախեալներու համար, որոնք պէտք են խօսիլ ձեզի համար եթէ դուք այդ մէկը չէք կրնար ընել
 - [Instrucción anticipada de atención de salud de California](#)
- [Փաստաթուղթեր Փոխարինելու Ուղեցոյց \(Էջ 9\)](#). Առնուելիք քայլեր՝ կորսուած, կարելորդ փաստաթուղթեր փոխարինելու համար

Շտապ կերպով կ'աշխատինք, ուղղութիւններ տրամադրելու շրջանային կեդրոններու, որպէսզի.

- Իբրեւ նախաձեռնող կողմ, հասնինք որոշ անհատներու եւ ընտանիքներու, որպէսզի ապահովենք որ շտապ կարիքներ դիմագրաւուին եւ ծառայութիւններ կարենան շարունակուիլ
- Ծառայութիւններ շարունակուին նոյնիսկ եթէ ծնողի կամ խնամակալի կարգավիճակը փոխուի
- Առաջնահերթութիւն տալ Individual Program Plan-ի (IPP) եւ Individual and Family Service Plan-ի (IFSP) թարմացումներու, օգնելու ընտանեկան փոխուող կարիքներուն, ինչպէս՝ յաւելեալ ժամեր տան մէջ, կամ չհաճախել ամառնային դպրոց կամ ամառնային ծրագիրներ
- Արտօնել որ հանդիպումներ, ներառեալ՝ IPP-ի եւ IFSP-ի, տեղի ունենան հեռակալ դրութեամբ, օգտագործելով հեռախօսներ եւ համակարգիչներ
- Արագացնել առժամեայ բնակեցութեան եւ փոխադրութեան օժանդակութիւնը տեղահանեալ ընտանիքներու համար

Կը տրամադրենք նաեւ ուղղութիւններ՝ ծառայութիւն մատուցողներու, արտօնելու համար որ ծառայութիւններ մատուցուին հեռակալ դրութեամբ, հնարաւոր աստիճանին: Հաճեցէք նկատի առնել, որ բոլոր ծառայութիւնները, ինչպէս փոխադրութիւնը եւ անձնական օժանդակութիւնը, չեն կրնար հեռակալ դրութեամբ տրամադրուիլ:

Անորոշության ժամանակներու ընթացքին, բնական է վախ զգալ կամ՝ ճնշուած: Հաճեցէք խնամել ձեր անձը, ձեր բարեկաւքները, եւ ձեր դրացիները: Բաժանմունքը պիտի շարունակէ տեղեկութիւններ եւ միջոցներ կիսել, երբ անոնք տրամադրելի կը դառնան: Եթէ ձեր ստացած ծառայութիւններուն մէջ, ձեզի անհրաժեշտ են յաւելեալ աջակցութիւններ կամ փոփոխութիւններ, հաճեցէք տեղեկացնել ձեր ծառայութիւններու համակարգողը: